



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԻ
ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՅՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ N 12(111) 19.09.2014թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

	<p align="center">ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ ԼՂՀ նախարարների և կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների հրամանները</p>	
78	«Աշխատանքի տոնավաճառի կազմակերպման ֆինանսավորման հայտ-պահանջագրի ձևը հաստատելու մասին» ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի N 4-Ն հրամանը.....	3
79	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի հունիսի 13-ի N158-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԼՂՀ առողջապահության նախարարի N 261-Ն հրամանը.....	5
80	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անտառային ֆոնդում արմատի վրա բնափայտի բացթողման նվազագույն գները սահմանելու մասին» ԼՂՀ կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետի N 54-Ն հրամանը	6
81	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմի բնական ռեսուրսների կառավարման գործակալության պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կազմը և կանոնակարգը, պետական ընդերքաբանական փորձաքննության գործընթացում անկախ փերձագետների ներգրավման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետի N 55-Ն հրամանը	8
82	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում որսի կենդանիների 2014-2015 թվականների սիրողական որսի համար թույլատրելի չափաքանակները և որսի ժամկետները սահմանելու մասին» ԼՂՀ կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետի N 62-Ն հրամանը	18
83	«Ոստիկանության կարգապահական հանձնաժողովի կազմում ընդգրկվելու նպատակով հասարակական միավորումների կողմից ներկայացվող հայտերը ոստիկանության կողմից ընդունելու, քննարկելու, թեկնածուներին ընտրելու կարգը սահմանելու մասին» ԼՂՀ կառավարությանն առընթեր ԼՂՀ ոստիկանության պետի N 1-Ն հրամանը	20
84	«Մտեփանակերտ քաղաքում ներքաղաքային ավտոբուսների կանոնավոր փոխադրումների սակագինը սահմանելու և Լեռնային	

	Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտի քաղաքապետի 2009 թվականի մայիսի 25-ի N607Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԼՂՀ Ստեփանակերտի քաղաքապետի N 1266-Ն որոշումը	25
ՀԱՏՈՒԿ ԲԱԺԻՆ		
	ԼՂՀ առողջապահության նախարարի կողմից լիցենզիաներ տրամադրելու, ուժը կորցրած ճանաչելու և լիցենզիայի գործունեության վայրի փոփոխման մասին հրամանների պատճենները	26
	ԼՂՀ արտադրական ենթակառուցվածքների նախարարության կողմից հուլիս ամսվա ընթացքում լիցենզիա տրամադրելու և լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին տեղեկություններ	34
	ԼՂՀ քաղաքաշինության նախարարության կողմից հուլիս և օգոստոս ամիսների ընթացքում լիցենզիաներ տրամադրելու և ուժը կորցրած ճանաչելու մասին տեղեկություններ.....	36
	ԼՂՀ կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետի կողմից լիցենզիա տրամադրելու և ուժը կորցրած ճանաչելու մասին հրամանների պատճենները	50

Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2014 թվականի սեպտեմբերի 1-ին
Պետական գրանցման համարը 1081475

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«29» օգոստոսի 2014թ.

N 4 -Ն

ք.Ստեփանակերտ

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՈՆԱՎԱՃԱՌԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ
ՀԱՅՏ-ՊԱՀԱՆՋԱԳՐԻ ԶԵՎՈ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի
օգոստոսի 5-ի N 504-Ն որոշմանը համապատասխան.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հաստատել աշխատանքի տոնավաճառի կազմակերպման ֆինանսավորման
հայտ-պահանջագրի ձևը՝ համաձայն հավելվածի:

Ս.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հայտ-պահանջագիր
աշխատանքի տոնավաճառի կազմակերպման ֆինանսավորման
Բյուջետային ծրագրերի գործառական դասակարգման՝ բաժին _____, խումբ _____, դաս _____, ծրագիր _____
20 թ. _____

Հ/Հ	Ծառայություն մատուցող կազմակերպությունը, պայմանագրի համարը	Հաշվարկային հաշվի համարը	Վճարման ենթակա գումարը (դրամ)
1	2	3	4
1			
	Ընդամենը		

Աշխատանքի և զբաղվածության գործակալության պետ՝

_____ (ստորագրություն) _____ (անուն, ազգանուն)

Կատարող՝

_____ (անուն, ազգանուն)

Կ.Տ.

« _____ » 20 թ.

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
 ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Ա. ԾԱՏՐՅԱՆ

Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2014 թվականի սեպտեմբերի 16-ին
Պետական գրանցման համարը 1011478

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«09» սեպտեմբերի 2014թ.

N 261 -Ն

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի N158-Ն ՀՐԱՄԱՆ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան.

Հրամայում եմ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի հունիսի 13-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության ենթակա բժշկական հաստատություններում բուժքույրերի ստաժավորումն անցկացնելու և ստաժավորում անցած բուժքույրերի որակավորման ստուգման կարգերը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարի 2011 թվականի հուլիսի 15-ի N123-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N158-Ն հրամանը:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.Հովհաննիսյանին՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

Հ.ՔՈՒՇԿՅԱՆ

Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2014 թվականի օգոստոսի 28-ին
Պետական գրանցման համարը 2061473

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ
ԱՌՐՆԹԵՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«20» օգոստոսի 2014թ.

N 54 -Ն

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԱՆՏԱՌԱՅԻՆ ՖՈՆԴՈՒՄ ԱՐՄԱՏԻ ՎՐԱ ԲՆԱՓՈՅՏԻ ԲԱՅԹՈՂՄԱՆ
ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԳՆԵՐՐ ԽԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի
ապրիլի 1-ի N 209-Ն որոշմամբ հաստատված հավելվածի «Ծանոթություն» բաժնի
համապատասխան՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Սահմանել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական
անտառային ֆոնդում արմատի վրա սոճենու բնափայտի բացթողման նվազագույն
գները՝ համաձայն հավելվածի:

2. Մույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան
հաջորդող տասներորդ օրը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ԱՎԱԳՅԱՆ

Հավելված
Սահմանված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարությանն առընթեր շրջակա
միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետի
2014 թվականի օգոստոսի 20-ի N 54 -ն հրամանով

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՖՈՆԴՈՒՄ
ԱՐՄԱՏԻ ՎՐԱ ԲՆԱՓԱՅՏԻ ԲԱՅԹՈՂՄԱՆ ԿՎԱԶԱԳՈՒՑՆ ԳՆԵՐԸ**

դրամ (ներառյալ ԱԱՀ)

ՀՀ	Ծառատեսակ- ների անվանումը	Ներքին շուկայի համար			Արտահանման համար		
		Խոշոր տրամա- գիծը 25սմ և ավելի	Միջին տրամա- գիծը 13սմ մինչև 25 սմ	Փոքր տրամա- գիծը մինչև 13 սմ	Խոշոր տրամա- գիծը 25սմ և ավելի	Միջին տրամա- գիծը 13սմ մինչև 25 սմ	Փոքր տրամա- գիծը մինչև 13 սմ
1	2	3	4	5	6	7	8
1	Գործափայտ (խտացված խորանարդ մետր)						
	Սոճենի	12000	9000	6000	14000	11000	8000

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և
բնական ռեսուրսների վարչության աշխատակազմի
ղեկավարի պաշտոնակատար

Ժ. Հարությունյան

Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2014 թվականի օգոստոսի 28-ին
Պետական գրանցման համարը 2061474

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԸՆԹԵՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«20» օգոստոսի 2014թ.

N 55-Ն

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԸՆԹԵՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԸՆԴԵՐՔԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ,
ՊԵՏԱԿԱՆ ԸՆԴԵՐՔԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ ԱՆԿԱՆ
ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 5-ի «Ուսումնասիրված պաշարների և ընդերքի մասին այլ տեղեկության պետական ընդերքաբանական փորձաքննության կարգը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 28-ի N 287 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 520-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Ստեղծել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմի բնական ռեսուրսների կառավարման գործակալության պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողով.

2. Հաստատել

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմի բնական ռեսուրսների կառավարման գործակալության պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմի բնական ռեսուրսների կառավարման գործակալության պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովի կանոնակարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) պետական ընդերքաբանական փորձաքննության գործընթացում անկախ փորձագետների ներգրավման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի.

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Ա.ԱՎԱԳՅԱՆ

ԿԱԶՄ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՈՒՄԵՐ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԸՆԴԵՐՔԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

- 1 Դավլաքյան Ֆ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմի բնական ռեսուրսների կառավարման գործակալության պետ՝ հանձնաժողովի նախագահ
- 2 Հայրապետյան Վ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմի բնական ռեսուրսների կառավարման գործակալության ընդերքի տրամադրման և օգտակար հանածոների պաշարների բաժնի պետ՝ հանձնաժողովի նախագահի տեղակալ
- 3 Աթայան Ա. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմի բնական ռեսուրսների կառավարման գործակալության ընդերքի տրամադրման և օգտակար հանածոների պաշարների բաժնի առաջատար մասնագետ՝ հանձնաժողովի քարտուղար
- 4 Հարությունյան Ա. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմի բնական ռեսուրսների կառավարման գործակալության կենսառեսուրսների, ջրային ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման բաժնի պետ
- 5 Ստեփանյան Ս. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմի բնապահպանական և ընդերքի պետական տեսչության պետ
- 6 Ասրյան Տ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմի բնապահպանական և ընդերքի պետական տեսչության ընդերքի երկրաբանական և մարկշերտերական վերահսկողության բաժնի պետ
- 7 Ոսկանյան Ս. «Արցախի երկրաբանական էքսպեդիցիա» պետական ոչ առևտրային կամակերպության գլխավոր երկրաբան
- 8 Գրիգորյան Ի. «Արցախի երկրաբանական էքսպեդիցիա» պետական ոչ առևտրային կամակերպության Կենտրոնական

լաբարատորիայի վարիչ

- 9 Գրիգորյան Գ. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմի բնական ռեսուրսների քաղաքականության բաժնի պետ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ժ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՇՐՋԱԿԱՄ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՎԱԶՄԻ
ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԸՆԴԵՐՔԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) բնական ռեսուրսների կառավարման գործակալության (այսուհետ՝ Գործակալություն) պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) խորհրդակցական մարմին է, որը կոչված է.

1) ուսումնասիրված պաշարների և ընդերքի մասին այլ տեղեկության պետական ընդերքաբանական փորձաքննության արդյունքների ամփոփման հիման վրա մասնագիտական եզրակացություններ տալու կոնդիցիաների պարամետրերի և պաշարների հաստատման, ինչպես նաև օգտակար հանածոների հանրապետական հաշվեկշիռի վերջիններիս դուրսգրման հիմնավորվածության վերաբերյալ,

2) գնահատելու ընդերքի ոլորտում գործող նորմատիվ մեթոդական հենքի համապատասխանությունն արդի պայմաններին և առաջարկություններ ներկայացնելու վերջինիս կատարելագործման անհրաժեշտության վերաբերյալ:

2. Հանձնաժողովի կազմը բաղկացած է ինն անդամից, այդ թվում՝ հինգ Գործակալության, երկուսական Աշխատակազմի բնապահպանական և ընդերքի պետական տեսչության, «Արցախի երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպության և մեկ Աշխատակազմի բնական ռեսուրսների քաղաքականության բաժնի (այսուհետ՝ առանձնացված և կառուցվածքային այլ ստորաբաժանումներ) հաստիքային աշխատակիցներից և երեք անկախ փորձագետներից:

Գործակալության պետը, Գործակալության Ընդերքի տրամադրման և օգտակար հանածոների պաշարների և Կենսառեսուրսների, ջրային ռեսուրսների, թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման բաժինների պետերը Գործակալության Ընդերքի տրամադրման և օգտակար հանածոների պաշարների բաժնի մասնագետը (գլխավոր կամ առաջատար) Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ի պաշտոն:

Առանձնացված և կառուցվածքային այլ ստորաբաժանումների հաստիքային աշխատակիցները Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են համապատասխան ստորաբաժանման ղեկավարի, իսկ անկախ փորձագետները՝ Գործակալության պետի ներկայացմամբ:

3. Գործակալության պետը Հանձնաժողովի նախագահն է, Գործակալության Ընդերքի տրամադրման և օգտակար հանածոների պաշարների բաժնի պետը՝ Հանձնաժողովի նախագահի տեղակալն է, իսկ Գործակալության Ընդերքի տրամադրման և օգտակար հանածոների պաշարների բաժնի մասնագետը (գլխավոր կամ առաջատար)՝ Հանձնաժողովի պատասխանատու քարտուղարն է:

4. Քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են Հանձնաժողովի նիստերում, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ ուշ, քան ամիսը մեկ անգամ:

5. Հանձնաժողովի նիստերն իրավագոր են, եթե դրանց մասնակցում է Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Ընդ որում, պարտադիր է փորձաքննվող նյութերի հեղինակ չհանդիսացող անկախ փորձագետներից և այլ առանձնացված ու կառուցվածքային ստորաբաժանումներից Հանձնաժողովի՝ առնվազն երկուսական անդամների մասնակցությունը:

6. Հանձնաժողովի նիստը վարում է Հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ տեղակալը:

7. Հանձնաժողովի նիստերում որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, նիստերին մասնակցած անդամների (բացառությամբ նյութերի հեղինակի) ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում որոշիչ է նիստը նախագահողի ձայնը:

8. Հանձնաժողովի ընդունած որոշումները ձևակերպվում են նիստի արձանագրությամբ, որն ստորագրում են նիստին մասնակցած Հանձնաժողովի անդամները:

Եթե Հանձնաժողովի առանձին անդամներ համաձայն չեն ընդունված որոշման հետ, ապա նրանց հատուկ կարծիքները կցվում են նիստի արձանագրությանը:

Հանձնաժողովի արձանագրությունը մասնագիտական հիմնավորում է Գործակալության կողմից ընդունվելիք համապատասխան որոշման համար:

9. Հանձնաժողովի նիստը հրավիրվում է Հանձնաժողովի նախագահի, իսկ նրա բացակայության դեպքում՝ տեղակալի կողմից:

Նիստի անցկացման կազմակերպումը իրականացնում է Հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը: Վերջինս նիստից առնվազն երեք աշխատանքային օր առաջ տեղյակ է պահում նիստի օրակարգի և ժամկետների մասին Հանձնաժողովի բոլոր անդամներին, միաժամանակ նրանց հնարավորություն տալով ծանոթանալու փորձաքննության ներկայացված նյութերի ու Հանձնաժողովի կայանալիք նիստի արձանագրության նախագծի հետ:

Հանձնաժողովի նիստերին մասնակցում է քննարկվող նյութերի փորձաքննության պատասխանատուն, իսկ նրա բացակայության դեպքում՝ համապատասխան բաժնի պետը:

Նյութերի պետական ընդերքաբանական փորձաքննությունն իրականացրած Գործակալության անկախ փորձագետի և (կամ) նյութերի հեղինակի բացակայությունը չի կարող խոչընդոտ հանդիսանալ Հանձնաժողովի նիստը անցկացնելու համար:

Նիստին ղիտորդի կարգավիճակով կարող են մասնակցել նաև քննարկվող նյութերի պատվիրատուն և հրավիրված այլ անձինք:

10. Առանձին դեպքերում փորձաքննվող հարցերը կարող են քննարկվել գնահատվող օբյեկտներում հրավիրվող Հանձնաժողովի արտագնա նիստերում, որոնց կազմակերպումն ապահովում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմը:

11. Հանձնաժողովի անդամները մասնակցում են պետական ընդերքաբանական փորձաքննությանը ներկայացված նյութերի աշխատանքային քննարկումներին, նախապես ծանոթանալով նյութերի ամբողջական փաթեթի հետ:

Հանձնաժողովի անդամները ապահովում են պետական ընդերքաբանական փորձաքննության ընթացքում ձեռք բերված տեղեկատվության խորհրդապահությունը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ**

Ժ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ր Գ
ՊԵՏԱԿԱՆ ԸՆԴԵՐՔԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ
ԱՆԿԱՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են պետական ընդերքաբանական փորձաքննության գործընթացին անկախ փորձագետների ներգրավման նպատակները, գործունեության սահմանները և նրանց վարձատրության չափի սահմանման սկզբունքներն ու ընթացակարգը:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) բնական ռեսուրսների կառավարման գործակալություն (այսուհետ՝ Գործակալություն) ներկայացված կոնդիցիաների հիմնավորմամբ օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանատնտեսագիտական գնահատման (վերագնահատման) աշխատանքների, պաշարների հաշվարկմամբ (վերահաշվարկմամբ) երկրաբանական հաշվետվությունների, ինչպես նաև պաշարների շարժի օպերատիվ հաշվարկման նյութերի (այսուհետ՝ Նյութեր) պետական ընդերքաբանական փորձաքննության (այսուհետ՝ Փորձաքննություն) գործընթացին, վճարովի հիմունքներով ներգրավվում են անկախ փորձագետներ (այսուհետ՝ Փորձագետներ):

3. Փորձագետները ներգրավվում են փորձաքննվող Նյութերն ամբողջությամբ կամ դրանց առանձին մասերը գնահատելու, դիտարկված հարցերի վերաբերյալ մասնագիտական կարծիք ձևավորելու և փորձագիտական եզրակացություն տալու նպատակով:

4. Որպես Փորձագետ կարող է հանդես գալ ընդերքաբանության ոլորտի այն մասնագետը, որը հանդիսացել է ոչ մետաղական կամ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաների հիմնավորման կամ պաշարների հաշվարկման նյութերի հեղինակ կամ համահեղինակ:

Փորձագետների անհատական կազմը Գործակալության պետի ներկայացմամբ հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետը:

5. Նյութերի Փորձաքննության գործընթացին Փորձագետի ներգրավումն իրականացվում է Փորձագետի և Աշխատակազմի ղեկավարի միջև կնքված պայմանագրի հիման վրա, համաձայն N 1 ձևի:

6. Փորձագետի աշխատավարձի չափը ձևավորվում է Քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոնների խմբի 3-րդ ենթախմբի քաղաքացիական ծառայողի մեկնարկային դրույքաչափի ու Փորձաքննության բարդության գործակցի արտադրյալով:

7. Փորձաքննության բարդության գործակցները որոշվում են ելնելով փորձաքննության ներկայացված նյութերի բովանդակությունից, բարդությունից ու ծավալից, ինչպես նաև փորձագետներին առաջադրվող հարցերի շրջանակից՝ ղեկավարվելով սույն կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ կետերով:

8. Պինդ օգտակար հանածոների հանքավայրերի փորձաքննության ներկայացված նյութերն ըստ իրենց բովանդակության, բարդության և ծավալի ստորաբաժանվում են հետևյալ վեց խմբերի.

1) ոչ մետաղական հանքավայրերի պարզ նյութերի շարքին են դասվում տեխնոլոգիական վերամշակում չպահանջող կամ միայն տեսակավորում պահանջող օգտակար հանածոյով ներկայացված, պարզ երկրաբանական կառուցվածք ունեցող, բաց եղանակով շահագործվելիք հանքավայրերին վերաբերող նյութերը, որոնք ամփոփված են մեկ գրքում և պարունակում են մինչև երեք գծագրական հավելվածներ.

2) ոչ մետաղական հանքավայրերի միջին բարդության նյութերի շարքին են դասվում մեխանիկական կամ հայտնի ավանդական տեխնոլոգիաներով վերամշակման ենթարկվելիք օգտակար հանածոյով ներկայացված, պարզ և միջին բարդության

երկրաբանական կառուցվածք ունեցող, բաց եղանակով շահագործվելիք հանքավայրերին վերաբերող նյութերը, որոնք ամփոփված են մեկ գրքում և պարունակում են մինչև հինգ գծագրական հավելվածներ.

3) ոչ մետաղական հանքավայրերի բարդ նյութերի շարքին են դասվում ավանդական տեխնոլոգիաներով վերամշակվելիք օգտակար հանածոներով ներկայացված բարդ երկրաբանական կառուցվածքի և նոր ժամանակակից (ոչ ավանդական) տեխնոլոգիաներով վերամշակվելիք օգտակար հանածոներով ներկայացված միջին բարդություն և բարդ երկրաբանական կառուցվածք ունեցող, բաց կամ ստորգետնյա եղանակով շահագործվելիք հանքավայրերին վերաբերող նյութերը, որոնք ամփոփված են մեկից ավելի գրքերում և պարունակում են հինգից ավելի գծագրական հավելվածներ.

4) մետաղական հանքավայրերի պարզ նյութերի շարքին են դասվում մեկ միասնական հանքամարմնով և ավանդական տեխնոլոգիաներով վերամշակվելիք օգտակար հանածոներով ներկայացված պարզ երկրաբանական կառուցվածք ունեցող, բաց եղանակով շահագործվելիք հանքավայրերին վերաբերող նյութերը, որոնք ամփոփված են առավելագույնս երկու գրքերում և պարունակում են մինչև տասը գծագրական հավելվածներ.

5) մետաղական հանքավայրերի միջին բարդության նյութերի շարքին են դասվում առավելագույնս տասը հանքամարմիններով և ավանդական տեխնոլոգիաներով վերամշակվելիք օգտակար հանածոներով ներկայացված պարզ և միջին բարդության երկրաբանական կառուցվածք ունեցող, բաց կամ ստորգետնյա եղանակով շահագործվելիք հանքավայրերին վերաբերող նյութերը, որոնք ամփոփված են առավելագույնս երեք գրքերում և պարունակում են մինչև 20 գծագրական հավելվածներ.

6) մետաղական հանքավայրերի բարդ նյութերի շարքին են դասվում առավելագույնս 20 հանքամարմիններով և ավանդական տեխնոլոգիաներով վերամշակվելիք օգտակար հանածոներով ներկայացված բարդ երկրաբանական կառուցվածքի և նոր ժամանակակից (ոչ ավանդական) տեխնոլոգիաներով վերամշակվելիք օգտակար հանածոներով ներկայացված միջին բարդություն և բարդ երկրաբանական կառուցվածք ունեցող, բաց կամ ստորգետնյա կամ համակցված եղանակով շահագործվելիք հանքավայրերին վերաբերող նյութերը, որոնք ամփոփված են հինգից ավելի գրքերում և պարունակում են 20-ից ավելի գծագրական հավելվածներ.

9. Պինդ օգտակար հանածոների հանքավայրերի նյութերի փորձաքննության բարդության գործակիցները ընդունվում են ըստ ստորև բերված սանդղակի:

Աղյուսակ

Հ/հ	Փորձագետի գնահատմանն առաջարկվող հարցերը	Մետաղական օգտակար հանածո			Ոչ մետաղական օգտակար հանածո		
		բարդ	միջին	պարզ	բարդ	միջին	պարզ
1	2	3	4	5	6	7	8
1.	Հանքավայրի և հանքավայրի շրջանի երկրաբանական կառուցվածքի վերաբերյալ	0.35	0.30	0.25	0.20	0.15	0.10
2.	Հանքավայրի (տեղամասի) երկրաբանական ուսումնասիրության համար ընտրված եղանակների, միջոցների ու ծավալների վերաբերյալ	0.50	0.40	0.30	0.20	0.15	0.10
3.	Օգտակար հանածոյի որակատեսխնդր-գիական հատկությունների վերաբերյալ	0.35	0.30	0.25	0.20	0.15	0.10
4.	Հանքավայրի շահագործման բնական պայմանների (հիդրո-, լեռնա-, ինժեներա-երկրաբանական, լեռնատեխնիկական, բնապահպանական և այլն) վերաբերյալ	0.20	0.15	0.15	0.10	0.05	0.05
5.	Պաշարների եզրագծման հիմնավորվածության և հաշվարկների	1.50	1.00	0.50	0.35	0.30	0.20

	ճշտության վերաբերյալ						
6.	Հանքավայրի շահագործման նախատեսվող եղանակի, բացման սխեմայի և մշակման համակարգի վերաբերյալ	0.50	0.35	0.20	0.20	0.10	0.05
7.	Օգտակար հանածոյի վերամշակման տեխնոլոգիական սխեմայի վերաբերյալ	0.40	0.30	0.20	0.20	0.10	-
8.	Հանքավայրի շահագործման տեխնիկատնտեսական ցուցանիշների հիմնավորվածության վերաբերյալ	0.35	0.30	0.25	0.20	0.10	0.10
9.	Կոնդիցիաների պարամետրերի կազմի ու չափաքանակների հիմնավորվածության վերաբերյալ	0.35	0.30	0.20	0.15	-	-
10.	Պաշարների շարժի հաշվարկման արդյունքների արժանահավատության վերաբերյալ	1.75	1.25	0.75	0.30	0.25	0.15
11.	Փորձաքննվող և ֆոնդային նյութերում զետեղված երկրաբանական տեղեկատվության զուգամիտության վերաբերյալ	1.00	0.60	0.30	0.20	0.10	0.05
12.	Ամփոփ և առաջնային երկրաբանական փաստագրման նյութերում զետեղված տեղեկատվության զուգամիտության վերաբերյալ	0.50	0.40	0.30	0.10	0.05	0.05

10. Ավելի քան 20 առանձնացված հանքամարմիններով ներկայացված մետաղական հանքավայրերը վերագրվում են առավել բարդերի շարքին և նման հանքավայրերի նյութերի փորձաքննության ժամանակ յուրաքանչյուր լրացուցիչ տասը հանքամարմինների համար նախորդ կետում բերված աղյուսակի 5-րդ և 10-րդ տողերի 3-րդ սյունակում նշված փորձաքննության բարդության գործակիցներին հավելվում է 0.2 գործակից:

11. Ստորգետնյա քաղցրահամ ջրերի հանքավայրերի նյութերը հավասարեցվում են ոչ մետաղական օգտակար հանածոների բարդ հանքավայրերի նյութերին, իսկ ստորգետնյա հանքային ջրերի հանքավայրերի նյութերը՝ մետաղական օգտակար հանածոների պարզ հանքավայրերի նյութերին:

12. Փորձագետի վարձատրությունն իրականացվում է միանվագ՝ նրա Փորձագիտական եզրակացությունը Գործակալություն ներկայացնելուց հետո, մեկ ամսվա ընթացքում:

13. Փորձագետի վարձատրության հիմք է հանդիսանում պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ Գործակալության պետի զեկուցագրի վրա Աշխատակազմի ղեկավարի համապատասխան նշագրումը:

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՆԹԵՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

Ճ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր
(օրինակելի ձև)

ք. Ստեփանակերտ _____ 201__ թ.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմը (այսուհետ՝ Գործատու), ի դեմս աշխատակազմի ղեկավար _____, որը գործում է վարչության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և քաղաքացի _____, անձնագիր _____, տրված _____ կողմից (այսուհետ՝
(անուն, հայրանուն, ազգանուն) (սերիա, համար)

Փորձագետ), մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Գործատուն Փորձագետին հանձնարարում է մասնակցել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմի Բնական ռեսուրսների կառավարման գործակալությունում (այսուհետ՝ Գործակալություն) իրականացվող _____
(հաշվետվության անվանումը)

_____ (այսուհետ՝ Նյութեր) պետական ընդերքաբանական փորձաքննությանը և Գործակալություն ներկայացնել Նյութերի վերաբերյալ իր փորձագիտական եզրակացությունը՝ առանձնակի ուշադրության արժանացնելով «Պետական ընդերքաբանական փորձաքննության գործընթացում անկախ փորձագետների ներգրավման և նրանց վճարման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 9-րդ կետում բերված սանդղակի (այսուհետ՝ Սանդղակ _____ հարցերը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Փորձագետն իրավունք ունի

2.1.1. Գործատուից պահանջել կատարված աշխատանքի դիմաց վարձատրություն:

2.2. Փորձագետը պարտավորվում է՝

2.2.1. Ծանոթանալ Նյութերի հետ, գնահատել դրանց բովանդակության և ձևավորման համապատասխանությունը գործող պահանջներին:

2.2.2. Նյութերի հեղինակների և դրանց փորձաքննության պատասխանատուի՝ Գործակալություն _____
(պաշտոն, անուն, հայրանուն, ազգանուն)

_____ հետ համատեղ մասնակցել այդ Նյութերի աշխատանքային քննարկումներին:
2.2.3. Առաջարկություններ տալ Նյութերում տեղ գտած թերությունների վերացման վերաբերյալ:
2.2.4. Նյութերի վերաբերյալ իր կողմից կազմված փորձագիտական եզրակացությունը ներկայացնել Գործակալություն՝ _____ ժամկետում:

2.3. Գործատուն իրավունք ունի.

2.3.1. Նյութերի պետական ընդերքաբանական փորձաքննության ժամանակահատվածում սահմանել Պայմանագրի 2.2.1., 2.2.2 և 2.2.3 ենթակետերում նշված Փորձագետի պարտավորությունների իրականացման ժամկետները, հաշվի առնելով տվյալ Նյութերի փորձաքննության գործընթացի փաստացի ընթացքը:

2.4. Գործատուն պարտավորվում է՝

2.4.1. Տրամադրել Փորձագետին փորձաքննության ենթարկվելիք Նյութերի լիարժեք փաթեթը և ապահովել նրան համապատասխան հրահանգչական ու նորմատիվ փաստաթղթերով:

2.4.2. Կազմակերպել Նյութերի աշխատանքային քննարկումներ Նյութերի հեղինակների, դրանց փորձաքննության պատասխանատուի և փորձաքննությանը ներգրավված բոլոր անկախ փորձագետների մասնակցությամբ:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՎՃԱՐՄԱՆ ՉՍՓՔ ԵՎ ՁԵՎԸ

3.1. Փորձագետի կողմից պայմանագրի 1.1 կետով նախատեսված աշխատանքի կատարման համար սահմանվում է

/ _____

/ _____
(գումարը թվերով)

/ _____
(գումարը բառերով)

_____ / ՀՀ դրամ աշխատավարձ, որը հաշվարկվում է հաշվի առնելով Սանդղակի համաձայն սահմանված փորձաքննության բարդության _____ գործակիցը:

3.2. Պայմանագրի 3.1 կետով նախատեսված աշխատավարձին համապատասխանող եկամտահարկի, սոցիալական ապահովագրության, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով սահմանված այլ պարտադիր վճարումները իրականացնում է Գործատուն:

3.3. Վճարման ձևը փոխանցումային է:

4. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՔԸ

4.1. Փորձագետի վարձատրությունն իրականացվում է միանվագ՝ նրա Փորձագիտական եզրակացությունը Գործակալություն ներկայացնելուց հետո, մեկ ամսվա ընթացքում:

4.2. Փորձագետի վարձատրության հիմք է հանդիսանում Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ Գործակալության պետի զեկուցագրի վրա Աշխատակազմի ղեկավարի համապատասխան նշագրումը:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև _____:
(ամիս, ամսաթիվ)

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կողմերը Պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

7. ԵԶՐԱՓՈՎԻՉ ԴՐՈՒՑԹՆԵՐ

7.1. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին՝ մեկական օրինակ:

8. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՈՐԾԱՏՈՒ՝

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի
և բնական ռեսուրսների վարչության
աշխատակազմի ղեկավար

_____/_____/

Գտնվելու վայրը՝ ք. Ստեփանակերտ, Գ.Նժդեհ 68
Հ/Հ _____

ստորագրություն

ՓՈՐՁԱԳԵՏ՝

անուն, ազգանուն, հայրանուն

Անձնագրի տվյալներ _____

Սոցիալական քարտի N _____

Բնակության վայրը _____

ստորագրություն

Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2014 թվականի սեպտեմբերի 16-ին
Պետական գրանցման համարը 2061477

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԸՆԹԵՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«9» սեպտեմբերի 2014թ.

N 62 -Ն

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈՐՄԻ
ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ 2014 -2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՐՈՂԱԿԱՆ ՈՐՄԻ
ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՈՐՄԻ
ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Սահմանել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում որսի կենդանիների 2014-2015 թվականների սիրողական որսի համար թույլատրելի չափաքանակները և որսի ժամկետները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված
Սահմանված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարությանն առընթեր ջրջակա
միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետի
2014 թվականի սեպտեմբերի 9 –ի N 62 -ն հրամանով

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՈՐՄԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ
2014 -2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՐՈՂԱԿԱՆ ՈՐՄԻ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ
ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՈՐՄԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

1. Աղավնիներ - մինչև 3000 հատ, 2014 թվականի սեպտեմբերի 20-ից 2015 թվականի հունվարի 24-ը (տաս հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ):
2. Լոր - մինչև 1000 հատ, 2014 թվականի սեպտեմբերի 20-ից 2015 թվականի հունվարի 24-ը (հինգ հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ):
3. Քարակաքավ - մինչև 500 հատ, 2014 թվականի նոյեմբերի 1-ից 2014 թվականի դեկտեմբերի 28-ը (հինգ հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ):
4. Ջրլող թռչուններ՝ բադեր (կոնչան բադ, կարմրագլուխ սուզաբադ, սուլող և ճքճքան մրտիմներ) և ջրհովիվներ (փառփար, եղեգնահավ) - մինչև 1000 հատ, 2014 թվականի հոկտեմբերի 18-ից 2015 թվականի փետրվարի 14-ը (հինգ հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ):
5. Նապաստակ - մինչև 70 հատ, 2014 թվականի նոյեմբերի 1-ից 2014 թվականի դեկտեմբերի 28-ը (մեկ հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ):
6. Աղվես - մինչև 100 հատ, 2014 թվականի նոյեմբերի 16-ից 2014 թվականի դեկտեմբերի 28-ը (երեք հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ):
7. Վարազ - մինչև 20 հատ, 2014 թվականի հոկտեմբերի 18-ից 2014 թվականի դեկտեմբերի 28-ը (երեք հատից ոչ ավելի յուրաքանչյուր որսի ժամանակ):

**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարությանն առընթեր ջրջակա միջավայրի և
բնական ռեսուրսների վարչության աշխատակազմի
ղեկավարի պաշտոնակատար**

Ժ. Հարությունյան

Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2014 թվականի սեպտեմբերի 19-ին
Պետական գրանցման համարը 2071479

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԸՆԹԵՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«16» սեպտեմբերի 2014թ.

N 1 -Ն

ք.Ստեփանակերտ

**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ
ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՅՏԵՐԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ,
ՔՆՆԱՐԿԵԼՈՒ, ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ ԸՆՏՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության
2014 թվականի օգոստոսի 5-ի N 515-Ն որոշման N 2 հավելվածի 5-րդ կետի.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մահմանել ոստիկանության կարգապահական հանձնաժողովի կազմում
ընդգրկվելու նպատակով հասարակական միավորումների կողմից ներկայացվող
հայտերը ոստիկանության կողմից ընդունելու, քննարկելու, թեկնածուներին
ընտրելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ

Կ.ԱՂԱԶԱՆՅԱՆ

Կ Ա Ր Գ

**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ
ԸՆԴՊՐՈՒՄ ԵՎ ԿՈՆՏՐՈՒՄ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՅՏԵՐԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ,
ՔՆՆԱՐԿԵԼՈՒ, ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ ԸՆՏՐԵԼՈՒ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ ոստիկանություն) կարգապահական հանձնաժողովի (այսուհետ՝ կարգապահական հանձնաժողով) կազմում ընդգրկվելու նպատակով հասարակական միավորումների կողմից ներկայացվող հայտերն ընդունելու, քննարկելու և թեկնածուներին ընտրելու հետ կապված հարաբերությունները:

2. Կարգապահական հանձնաժողովի կազմում ընդգրկվելու նպատակով հասարակական միավորումների ներկայացուցիչների ընտրությունը յուրաքանչյուր տարի իրականացնում է ոստիկանությունը:

3. Հասարակական միավորման ներկայացուցչի ընտրության համար սույն կարգով նախատեսված դրույթների կատարման անմիջական պատասխանատուն ոստիկանության ներքին անվտանգության ծառայությունն է:

**II. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴՊՐՈՒՄ
ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

4. Կարգապահական հանձնաժողովի կազմում հասարակական միավորումների ներկայացուցիչներին ընդգրկելու մասին հայտարարությունը ոստիկանությունը հրապարակում է մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ը՝ հասարակական միավորումների տվյալների շտեմարանի ձևավորման և վարման համար: Հայտարարությունը հրապարակվում է մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով, ինչպես նաև ոստիկանության www.police.nkr.am պաշտոնական կայքէջում:

5. Հայտարարության մեջ պետք է ներառվեն առնվազն հետևյալ տվյալները՝

1) հայտերի ներկայացման վայրը (հասցեն) և հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն.

2) հայտերի ընդունման օրերը և ժամերը.

3) հայտ ներկայացնող հասարակական միավորումներից պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները.

4) հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը:

6. Հասարակական միավորումները հայտերը ներկայացնում են ոստիկանություն՝ համաձայն ձևի (կցվում է):

**III. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՇՏԵՄԱՐԱՆԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՈՒՄԸ**

7. Ոստիկանությունը հասարակական միավորումների հայտերի հիման վրա ձևավորում է տվյալների շտեմարան:

8. Տվյալների շտեմարանն իր մեջ պարունակում է հետևյալ տվյալները՝

1) հասարակական միավորման անվանումը.

2) հասարակական միավորման գտնվելու վայրը.

3) հասարակական միավորման գործունեության բնույթը.

4) գործադիր մարմնի ղեկավարի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները.

5) ներկայացուցչի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի հասցեն:

9. Հասարակական միավորումների տվյալների շտեմարանը վարում է ներքին անվտանգության ծառայությունը:

10. Տվյալների շտեմարանը ձևավորվում է յուրաքանչյուր տարի՝ հայտարարությունը հրապարակելուց հետո 30-օրյա ժամկետում՝ հասարակական միավորումների կողմից ներկայացված հայտերի հիման վրա:

11. Հասարակական միավորումը որևէ տվյալի փոփոխման դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր տեղեկացնում է ոստիկանությանը:

IV. ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

12. Հայտ կարող են ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործող այն հասարակական միավորումները, որոնք ունեն առնվազն երեք ամսվա գործունեություն:

13. Յուրաքանչյուր հասարակական միավորում հայտը ներկայացնում է մեկ լիազոր ներկայացուցչի համար:

14. Եթե հայտը ներկայացնողը հասարակական միավորման գործադիր մարմնի ղեկավարը չէ, ապա հայտի հետ ներկայացնում է նաև հասարակական միավորման կողմից տրված լիազորագիրը:

15. Հասարակական միավորման կողմից հայտ չի կարող ներկայացվել այն ներկայացուցչի համար, որը դատապարտվել է հանցագործություն կատարելու համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ և (կամ) տառապում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 1-ի N 184-Ն որոշմամբ հաստատված ցանկով նախատեսված հիվանդություններից որևէ մեկով:

16. Սույն կարգի 15-րդ կետով նախատեսված պահանջների ապահովման համար պատասխանատու են հայտը ներկայացնող հասարակական միավորման ներկայացուցիչը և հասարակական միավորման գործադիր մարմնի ղեկավարը:

V. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼԸ ԵՎ ԴՐԱՆՔ ՄԵՐԺԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ

17. Կարգապահական հանձնաժողովի կազմում ընդգրկվելու վերաբերյալ հասարակական միավորումների կողմից ներկայացված հայտերը քննարկվում են ներքին անվտանգության ծառայության կողմից:

18. Ներկայացրած հայտը կարող է մերժվել, եթե ներկայացվել է սույն կարգի պահանջների խախտմամբ:

19. Հայտում ձևական սխալների առկայության դեպքում ներքին անվտանգության ծառայությունը տեղեկացնում է այդ մասին հայտը ներկայացնողին և հնարավորություն տալիս մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետի ավարտը շտկելու դրանք:

20. Հայտը մերժվում է ներքին անվտանգության ծառայության կողմից գրավոր ծանուցման միջոցով հայտը ստացվելուց հետո յոթ օրացուցային օրվա ընթացքում՝ նշելով սույն կարգի այն դրույթը, որի չպահպանելը մերժման համար հիմք է հանդիսացել:

21. Հայտի մերժումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

22. Կարգապահական հանձնաժողովի կազմում ընդգրկվելու վերաբերյալ հասարակական միավորման կողմից հայտ չի կարող ներկայացվել միննույն ներկայացուցչի վերաբերյալ երկու տարի անընդմեջ:

VI. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ ԸՆՏՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

23. Ներքին անվտանգության ծառայությունը յուրաքանչյուր տարի տվյալների շտեմարանի ձևավորումից հետո 10-օրյա ժամկետում տվյալների շտեմարանը ներկայացնում է ոստիկանության պետին, որի կողմից հանձնաժողովի կազմում ընդգրկվելու նպատակով ընտրվում է չորս հասարակական միավորում: Ընտրության

ընթացքում նախապատվությունը կարող է տրվել իրավապաշտպան հասարակական գործունեությամբ զբաղվող հասարակական միավորումներին:

24. Եթե տվյալ տարում կարգապահական հանձնաժողովի կազմում ընդգրկվելու համար ներկայացվել է թվով չորս հայտ, ապա ընտրված են համարվում այդ թեկնածուները:

25. Եթե ներկայացված հայտերի թիվը չորսից պակաս է, ապա ոստիկանությունը հրապարակում է նոր հայտարարություն՝ հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը 15 օրով երկարաձգելու վերաբերյալ:

26. Կարգապահական հանձնաժողովի կազմում ընդգրկվելու համար ընտրված թեկնածուների տվյալները հինգ աշխատանքային օրվա ընթացքում ոստիկանության կողմից ներկայացվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմ՝ հաստատման:

27. Եթե Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ամբողջությամբ կամ մասնակի չի հաստատում ներկայացված թեկնածությունները, կամ մինչև հաստատման ներկայացնելը թեկնածուն հրաժարվում է ընդգրկվել կարգապահական հանձնաժողովի կազմում, կամ նրա ընդգրկվելը որևէ պատճառով (մահ, հիվանդություն և այլն) դառնում է անհնարին, ոստիկանության պետն առկա տվյալների շտեմարանից կատարում է լրացուցիչ ընտրություն, և ընտրված թեկնածուների տվյալները ներկայացվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմ՝ հաստատման:

28. Եթե Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից թեկնածությունները հաստատելուց հետո կարգապահական հանձնաժողովի կազմում ընդգրկված հասարակական միավորման ներկայացուցիչը հրաժարվում է կարգապահական հանձնաժողովում իր անդամությունից կամ նրա մասնակցությունը կարգապահական հանձնաժողովի աշխատանքներին որևէ պատճառով (մահ, հիվանդություն և այլն) դառնում է անհնարին, ոստիկանության պետն առկա տվյալների շտեմարանից կատարում է լրացուցիչ ընտրություն, և ընտրված նոր թեկնածուի տվյալները ներկայացվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմ՝ հաստատման:

29. Եթե շտեմարանում առկա հայտերի թիվը չի բավարարում սույն կարգի 27-րդ և 28-րդ կետերով նախատեսված լրացուցիչ ընտրությունը կատարելու համար, ապա ոստիկանությունը հրապարակում է լրացուցիչ հայտարարություն:

30. Կարգապահական հանձնաժողովի կազմում ընտրվելու մասին ներքին անվտանգության ծառայությունը գրավոր տեղեկացնում է թեկնածուին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշմամբ կարգապահական հանձնաժողովի կազմում հասարակական միավորումների ներկայացուցիչներին ընդգրկելուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

31. Կարգապահական հանձնաժողովի կազմում ընտրված և ընդգրկված հասարակական միավորման ներկայացուցիչը կարգապահական հանձնաժողովի նիստերին ներկայանում է անձը հաստատող փաստաթղթով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության պետ
պարոն _____
(անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ

Խնդրում եմ _____-ն ընդգրկել
(հասարակական միավորման անվանումը)

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության տվյալների շտեմարանում՝
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության կարգապահական
հանձնաժողովի կազմում հասարակական միավորման ներկայացուցչին ներգրավելու
նպատակով:

Ներկայացնում եմ հետևյալ տեղեկությունները՝
1. հասարակական միավորման գտնվելու վայրը՝ _____

2. հասարակական միավորման գործունեության բնույթը՝ _____

3. գործադիր մարմնի ղեկավար՝ _____
(անունը, ազգանունը)

(ծննդյան օրը, ամիսը, տարին) (անձնագրի սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)

4. ներկայացուցիչ՝ _____
(անունը, ազգանունը) (ծննդյան օրը, ամիսը, տարին)

(անձնագրի սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)

(հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի հասցեն)

Հայտնում եմ, որ ներկայացվող անձը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարության 2014 թվականի ապրիլի 1-ի N 184-Ն որոշմամբ հաստատված ցանկով
նախատեսված հիվանդություններից որևէ մեկով չի տառապում:

Կեղծ տեղեկություններ (տվյալներ) ներկայացնելու համար օրենքով նախատեսված
պատասխանատվության մասին զգուշացված եմ՝

Հայտատու՝ _____
(ստորագրություն) (անունը, ազգանունը)

«_____» _____ 20 թ.

Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2014 թվականի սեպտեմբերի 3-ին
Պետական գրանցման համարը 4001476

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«21» օգոստոսի 2014թ.

N 1266-Ն

ք.Ստեփանակերտ

**ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔՈՒՄ ՆԵՐՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՎՏՈՔՈՒՄՆԵՐԻ
ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՍԱԿԱԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ
ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 25-Ի N607Ն ՈՐՈՇՈՒՄ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝

ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. 2014 թվականի հոկտեմբերի 1-ից Ստեփանակերտ քաղաքում ներքաղաքային ավտոբուսների կանոնավոր փոխադրումների սակագինը սահմանել 100 (հարյուր) ՀՀ դրամ:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտի քաղաքապետի 2009 թվականի մայիսի 25-ի «Ստեփանակերտ քաղաքում ներքաղաքային ավտոբուսների կանոնավոր փոխադրումների սակագինը սահմանելու մասին» N607Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ դրա գործողությունը տարածվում է 2014 թվականի հոկտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

**Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Քաղաքապետ**

**Լ Ե Ռ Ն Ա Յ Ի Ն Ղ Ա Ր Ա Բ Ա Ղ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր**

Հ Ր Ա Մ Ա Ն

«19» օգոստոսի 2014թ.

N 238-Ա

ք.Ստեփանակերտ

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՅԿ ՌՈԺԴԵՆԻ ԱՌՍԱՄՅԱՆԻՆ ՏՐՎԱԾ
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՌԻՖԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ, 21-րդ հոդվածները, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և անհատ ձեռնարկատեր Հայկ Ռոժդենի Առստամյանի դիմումը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել 2008 թվականի մարտի 12-ին ընդհանուր ստոմոտոլոգիական գործունեության համար անհատ ձեռնարկատեր Հայկ Ռոժդենի Առստամյանին տրված թիվ Ա-XX-000062 լիցենզիան:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի լիցենզիայի գծով առաջին կարգի մասնագետ Ա.Զիլինգարյանին՝

1) ապահովել լիցենզիայի դադարեցման մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) անհատ ձեռնարկատեր Հայկ Ռոժդենի Առստամյանի լիցենզիայի բնօրինակը կցել նրա անհատական գործին.

3) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Հ. Մ. ՔՈՒՇԿՅԱՆ

Լ Ե Ռ Ն Ա Յ Ի Ն Ղ Ա Ր Ա Բ Ա Ղ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր

Հ Ր Ա Մ Ա Ն

«19» օգոստոսի 2014թ.

N239-Ա

ք.Ստեփանակերտ

Ա Ն Հ Ա Տ Ձ Ե Ռ Ն Ա Ր Կ Ա Տ Ե Ր Ա Ս Տ Ղ Ի Կ Ա Ր Ե Գ Ի Ա Բ Ր Ա Հ Ա Մ Յ Ա Ն Ի Ն
Լ Ի Ց Ե Ն Ձ Ի Ա Տ Ր Ա Մ Ա Դ Ր Ե Լ ՈՒ Մ Ա Մ Ի Ն

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 26-րդ, 28-րդ հոդվածների, 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 3-րդ բաժնի 4-րդ կետի պահանջներով.

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ Ե Մ

1. Անհատ ձեռնարկատեր Աստղիկ Արեգի Աբրահամյանի (գործունեության իրականացման վայրը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն քաղաք Քարվաճառ) հայտը բավարարել և տրամադրել *դեղատնային գործունեություն (դեղատնային կրպակ)* իրականացնելու համար լիցենզիա:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի լիցենզիայի գծով առաջին կարգի մասնագետ Ա.Չիլինգարյանին՝

1) ապահովել տրված լիցենզիայի մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Հ. Մ. ՔՈՒՇԿՅԱՆ

**Լ Ե Ռ Ն Ա Յ Ի Ն Ղ Ա Ր Ա Բ Ա Ղ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր**

Հ Ր Ա Մ Ա Ն

«19» օգոստոսի 2014թ.

N 240-Ա

ք.Ստեփանակերտ

**Ա Ն Հ Ա Տ Ձ Ե Ռ Ն Ա Ր Կ Ա Տ Ե Ր Վ Ա Հ Ր Ա Մ Գ Ր Ի Գ Ո Ր Ի Ի Ղ Ա Լ Ա Յ Ա Ն Ի Ն
«Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն Ս Տ Ո Մ Ա Տ Ո Լ Ո Գ Ի Ա Կ Ա Ն» Գ Ո Ր Ծ Ո Ւ Ն Ե Ռ Ի Թ Յ Ա Ն
Լ Ի Ց Ե Ն Ջ Ի Ա Տ Ր Ա Մ Ա Դ Ի Ե Լ ՈՒ Մ Ա Ս Ի Ն**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 26-րդ, 28-րդ հոդվածների, 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 3-րդ բաժնի 5-րդ կետի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 31-ի N 152-Ն որոշման պահանջներով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ`

1. Անհատ ձեռնարկատեր Վահրամ Գրիգորիի Ղալայանի (գործունեության իրականացման վայրը` Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ք. Ստեփանակերտ Մ. Շահինյան 1) հայտը բավարարել և տրամադրել «Ընտանեկան ստոմատոլոգիական» գործունեություն իրականացնելու լիցենզիա:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի լիցենզիայի գծով առաջին կարգի մասնագետ Ա.Զիլինգարյանին`

1) գրանցել տրված լիցենզիայի մասին տեղեկությունը համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Հ. Մ. ՔՈՒՇԿՅԱՆ

Լ Ե Ռ Ն Ա Յ Ի Ն Ղ Ա Ր Ա Բ Ա Ղ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր

Հ Ր Ա Մ Ա Ն

«19» օգոստոսի 2014թ.

N 241-Ա

ք.Ստեփանակերտ

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄԱՍՈՒՆ ՄԱՍՎԵԼԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ
ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 26-րդ, 28-րդ հոդվածների, 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 3-րդ բաժնի 4-րդ կետի պահանջներով.

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ Ե Մ

1. Անհատ ձեռնարկատեր Սատուն Սամվելի Աբրահամյանի (գործունեության իրականացման վայրը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն քաղաք Ստեփանակերտ Գ.Սևունցի 1/8) հայտը բավարարել և տրամադրել *դեղատնային գործունեություն (դեղատնային կրպակ)* իրականացնելու համար լիցենզիա:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի լիցենզիայի գծով առաջին կարգի մասնագետ Ա.Զիլինգարյանին՝

1) ապահովել տրված լիցենզիայի մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Հ. Մ. ՔՈՒՇԿՅԱՆ

**Լ Ե Ռ Ն Ա Յ Ի Ն Ղ Ա Ր Ա Բ Ա Ղ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր**

Հ Ր Ա Մ Ա Ն

«19» օգոստոսի 2014թ.

N 242

ք.Ստեփանակերտ

**«ԷԿՈ-ՖԱՐՄ» ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասը և «ԷԿՈ-ՖԱՐՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 2014 թվականի օգոստոսի 12-ի գրությունը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. «ԷԿՈ-ՖԱՐՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (2009 թվականի նոյեմբերի 24-ին տրված դեդատնային գործունեություն (դեդատնային կրպակ) թիվ Կ-XX-000111 լիցենզիա) իրականացման վայրը ԼՂՀ ք. Ստեփանակերտ Մ.Դավիթ 54 հասցեից փոփոխել ԼՂՀ ք. Ստեփանակերտ Մ.Բաղրամյան 9 հասցե:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի լիցենզիայի գծով առաջին կարգի մասնագետ Ա.Չիլինգարյանին՝

1) ապահովել լիցենզիայի գործունեության իրականացման վայրի վերաբերյալ կատարված փոփոխության մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում,

2) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին:

Հ. Մ. ՔՈՒՇԿՅԱՆ

**Լ Ե Ռ Ն Ա Յ Ի Ն Ղ Ա Ր Ա Բ Ա Ղ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր**

Հ Ր Ա Մ Ա Ն

«09» սեպտեմբերի 2014թ.

N 259

ք.Ստեփանակերտ

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆԱԻՐԱ ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻՆ ՏՐՎԱԾ
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՈՒՇԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ, 21-րդ հոդվածները, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և Ն.Մելքումյանի 2014 թվականի սեպտեմբերի 08-ի դիմումը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել 2007 թվականի նոյեմբերի 02-ին դեղատնային գործունեության համար անհատ ձեռնարկատեր Նաիրա Մելքումյանին տրված թիվ Ա-XX-000020 լիցենզիան:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի լիցենզիայի գծով առաջին կարգի մասնագետ Ա.Զիլինգարյանին՝

1) ապահովել լիցենզիայի դադարեցման մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) անհատ ձեռնարկատեր Նաիրա Մելքումյանի լիցենզիայի բնօրինակը կցել նրա անհատական գործին.

3) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Հ.ՔՈՒՇԿՅԱՆ

**Լ Ե Ռ Ն Ա Յ Ի Ն Ղ Ա Ր Ա Բ Ա Ղ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր**

Հ Ր Ա Մ Ա Ն

«10» սեպտեմբերի 2014թ.

N 265-Ա

ք.Ստեփանակերտ

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՌՈՔԻԿ ՄԱՐԿԱՆԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ՏՐՎԱԾ
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՌԻՖԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ, 21-րդ հոդվածները, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և անհատ ձեռնարկատեր Ռոքիկ Սարվանի Մինասյանի դիմումը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել 2014 թվականի մայիսի 12-ին ատամնատեխնիկական գործունեության համար անհատ ձեռնարկատեր Ռոքիկ Սարվանի Մինասյանին տրված թիվ Ա-XX-000258 լիցենզիան:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի լիցենզիայի գծով առաջին կարգի մասնագետ Ա.Զիլինգարյանին՝

1) ապահովել լիցենզիայի դադարեցման մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) անհատ ձեռնարկատեր Ռոքիկ Սարվանի Մինասյանի լիցենզիայի բնօրինակը կցել նրա անհատական գործին.

3) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Հ.ՔՈՒՇԿՅԱՆ

**Լ Ե Ռ Ն Ա Յ Ի Ն Ղ Ա Ր Ա Բ Ա Ղ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր**

Հ Ր Ա Մ Ա Ն

«10» սեպտեմբերի 2014թ.

N 266

ք.Ստեփանակերտ

**Ա Ն Հ Ա Տ Ձ Ե Ռ Ն Ա Ր Կ Ա Տ Ե Ր Ռ Ո Ր Բ Կ Մ Ա Ր Կ Ա Ն Ի Մ Ի Ն Ա Ս Յ Ա Ն Ի Ն
Լ Ի Ց Ե Ն Ջ Ի Ա Տ Ր Ա Մ Ա Դ Ի Ե Լ ՈՒ Մ Ա Ս Ի Ն**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 26-րդ, 28-րդ հոդվածների, 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 3-րդ բաժնի 5-րդ կետի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 31-ի N 152-Ն որոշման պահանջներով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Անհատ ձեռնարկատեր Ռոբիկ Սարվանի Մինասյանի հայտը բավարարել և տրամադրել «Ընտանեկան ստոմատոլոգիական և ատամնատեխնիկական» գործունեություն իրականացնելու լիցենզիա:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի լիցենզիայի գծով առաջին կարգի մասնագետ Ա.Չիլինգարյանին՝

1) գրանցել տրված լիցենզիայի մասին տեղեկությունը համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Հ.Ս.ՔՈՒՇԿՅԱՆ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ՀՈՒՒԽ ԱՄՍՈՒՄ ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱՂԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Լիցենզավորված անձի, անվանումը կամ անունը, ազգանունը	Լիցենզիայի		Գործունեության		Լիցենզիայի գործողության ժամկետը	Ծանոթություն	
		համարը	տրամա ամսաթիվը	տեսակը	Իրականացման վայրը			
1	2	3	4	5	6	7	8	
1	ԱԶ Հայկ Հարությունյան	ՏՕ N00391	04.07.2014թ.	Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ կազմակերպելու համար՝ անհատ ձեռնարկատերերի կողմից մեկ ավտոմոբիլով	Լ.Ղ.Հ	անժամկետ		
2	ԱԶ Սասուն Բալայան	ՏՕ N00392				անժամկետ		
3	ԱԶ Ալբերտ Բեկլարյան	ՏՕ N00393				անժամկետ		
4	ԱԶ Ալեքսանդր Մկրտչյան	ՏՕ N00394				14.07.2014թ.		անժամկետ
5	ԱԶ Նելսոն Մանգասարյան	ՏՕ N00395				17.07.2014թ.		անժամկետ
6	ԱԶ Արամ Մաֆարյան	ՏՕ N00396				21.07.2014թ.		անժամկետ
7	ԱԶ Դավիթ Սարգսյան	ՏՕ N00397				անժամկետ		
8	ԱԶ Մհեր Առստամյան	ՏՕ N00398				29.07.2014թ.		անժամկետ
9	ԱԶ Կամո Սարգսյան	ՏԿՈՒ N00037	21.07.2014թ.	Ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպում		անժամկետ		
10	ԱԶ Խաչատուր Մունչյան	ՏՕ N00313	16.07.2013թ.	Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ կազմակերպելու համար՝ անհատ ձեռնարկատերերի կողմից մեկ ավտոմոբիլով	Լ.Ղ.Հ	անժամկետ	դադարեցվել է 04.07.2014թ.	
11	ԱԶ Ռաջ Գալստյան	ՏՕ N00125	01.06.2011թ.			անժամկետ		
12	ԱԶ Անդրանիկ Ներսիսյան	ՏՕ N00307	27.06.2013թ.			անժամկետ	դադարեցվել է 14.07.2014թ.	
13	ԱԶ Մհեր Սարգսյան	ՏՕ N00306	27.06.2013թ.			անժամկետ		
14	«Մուսթանգ» ՍՊԸ	ՏՕ N00292	13.05.2013թ.	Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ կազմակերպելու համար՝ մեկից ավելի ավտոմոբիլներով	Լ.Ղ.Հ	անժամկետ	դադարեցվել է 17.07.2014թ.	
15	ԱԶ Գառնիկ Կարապետյան	ՏՕ N00130	11.07.2011թ.	Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ կազմակերպելու համար՝ անհատ ձեռնարկատերերի կողմից մեկ ավտոմոբիլով	Լ.Ղ.Հ	անժամկետ		
16	ԱԶ Ալեքսանդր Հարությունյան	ՏՕ N00083	16.06.2010թ.			անժամկետ		
17	ԱԶ Ծատուր Բաբայան	ՏՕ N00308	04.07.2013թ.			անժամկետ		

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր
2014 թվականի հուլիս ամսվա համար

ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն

NN	Ֆիզիկական. անձանց /անուն, ազգանուն/, բնակության վայրը իրավաբանական անձանց /անվանումը/, գտնվելու վայրը	ՀՎՀՀ	Լիցենզ. համար	Լիցենզ. տալու ամսաթ.	Գործողության տեսակը	Գործուն. իրական. վայրը	Գործող. ժամ-կետը	Պետական տուրքի առաջին վճարման ամսաթիվը	Ծանոթ.
1	«Նարինե և Գեղանի» ՍՊԸ ք.Ստեփ., Վ.Մամիկոնյան 29/14	90010351	ՇԻ-873	10.07.2014	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամ-կետ	04.07.2014	
2	«Վերանորոգման, շինարարության տնտեսություն» ՓԲԸ ք. Ստեփ. Ենիկոլոպովի 3/1	90026704	ՇԻ-874	10.07.2014	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամ-կետ	09.07.2014	
3	«ԷԼԼԻՊՍ ՔԵՅ» ՍՊԸ ք. Ստեփ, Թումանյանի փող. 13	90032395	ՇԻ-875	24.07.2014	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>կապի</i>	ԼՂՀ տարածքում	Անժամ-կետ	23.07.2014	
4	«Անահիտ-1» ՍՊԸ ք. Ստեփ. Ազատամարտիկների 34/13	90025382	ՇԻ-876	31.07.2014	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամ-կետ	31.07.2014	

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր
2014 թվականի հուլիս ամսվա համար

ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն

NN	Լիցենզավորված, թույլտվություն, արտոնագիր ունեցող անձի		Լիցենզիայի սերիան և համարը	Լիցենզավորված գործունեության տեսակը	Լիցենզիայի վերաձևակերպում		Լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգում (նշել երկարաձգված ժամանակահատվածի ավարտման ամսաթիվը)	Լիցենզիայի, թույլտվության արտոնագրի գործողության կասեցում		Լիցենզիայի գործունեության դադարեցման կամ թույլտվությունը, արտոնագիրը կամ համարվելու ամսաթիվը
	Անվանումը	ՀՎՀՀ			Որոշման ամսաթիվը	Նոր անվանումը		կասեցման մասին որոշման կամ դեպքի ամսաթիվը	կասեցումը հանելու մասին որոշման ամսաթիվը	
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.
1	«ԽԱՉԵՆ» ՓԲԸ ք. Ստեփ. Ա. Առաքելյանի 1	90003261	ՇԻ-402	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>				05.07.2014		
2	«ԱՌԱՔԵԼ» ՍՊԸ ԼՂՀ Մարտակերտի շրջան գ. Գետավան	90144003	ՇԻ-465	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				05.07.2014		
3	«ԴՂՅԱԿ» ՍՊԸ ք. Շուշի Ղազանյեցոց 35	90342247	ՇԻ-468	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				16.07.2014		
4	«ԱՇՈՑՔ» ՍՊԸ ք. Ասկերան, Շահումյան 62	90013565	ՇԻ-663	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>տրանսպորտային</i>				09.07.2014		
5	«Մ Ե Չ Տ Ա» ԱԿ ք. Ստեփանակերտ, Կամոյի 2	90003056	ՇԻ-664	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>				09.07.2014		
6	«ԴՈՐՈՄԵՆԿ» ՍՊԸ ԼՂՀ Ասկերանի շրջան, գ. Այգեստան	90071281	ՔՓՄ-735	Քաղաքաշինության փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				04.07.2014		
		90071281	ՔՓՄ-736	Քաղաքաշինության փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>						

		90071281	ՔՓՄ-737	Քաղաքաշինության փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ տրանսպորտային					
		90071281	ՔՓՄ-738	Քաղաքաշինության փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ էներգետիկ					
		90071281	ՔՓՄ-739	Քաղաքաշինության փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ կապի					
7	«ՄՈՂԵՌ» ՓԲԸ ք. Ստեփ., Մ.Դավիթ 54/52	90004522	ՈՏՀ-741	Որակի տեխնիկական հսկողություն, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական			07.07.2014		
8	«ԱՐԱՄԵ» ՍՊԸ Ասկերանի շրջան, գյուղ Դահրավ	90073476	ՇԻ-744	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ էներգետիկ			14.07.2014		
9	«Մամվել Այվազյան» ԱԶ ք. Ստեփ. Աղմ. Բակոյի փող., շենք 2ա/18	90443734	ՔՓՄ-749	Քաղաքաշինության փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական			29.07.2014		
10	«ՄԱՐԴՈՆԻԿՄ» ՍՊԸ ք. Շուշի Գ. Նժդեհ 23/12	90342119	ՇԻ-795	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական			13.07.2014		
11	«Նիվա» ՍՊԸ Քաջաթաղի շրջ.-ք.Բերձոր, V թաղ. տ.63	10000482	ՇԻ-796	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ հիդրոտեխնիկական			13.07.2014		
12	«Ա Պ Ո Լ Լ Ո Ն» ՍՊԸ ք. Ստեփ. փող. Թումանյան 7	90022831	ՇԻ-824	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական			05.07.2014		
13	«Իմաստ» ՍՊԸ ԼՂՀ Քաջաթաղի շրջ. ք.Բերձոր V թղ. 78տ	10003104	ՇԻ-826	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ հիդրոտեխնիկական			19.07.2014		
14	«ԿԱԳԻԼԱՐ» ՍՊԸ Շահումյանի շրջան, գյուղ Ակնաբերդ	90028228	ՇԻ-794	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական				18.07.2013	
15	«Վահե Կարապետյան ճանշահագործում» ՓԲԸ ք.Շուշի	90341889	ՇԻ-710	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ տրանսպորտային				25.03.2013	
16	«ԳԱՐԱՆ-ՍՏՐՈՅ» ՍՊԸ ք. Ստեփ. փող. Ա. Մկրտչյանի 9/11	90031703	ՇԻ-825	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական					24.07.2014 (դիմում առ 17.07.2014)
17	«Զագիկ» ՍՊԸ ԼՂՀ Մարտակերտի շրջան, գ. Զագիկ	90141288	ՇԻ-614	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական					31.07.2014 (դիմում առ 29.07.2014)

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր
2014 թվականի օգոստոս ամսվա համար

ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն

NN	Ֆիզիկական. անձանց /անուն, ազգանուն/, բնակության վայրը իրավաբանական անձանց /անվանումը/, գտնվելու վայրը	ՀՎՀՀ	Լիցենզ. համար	Լիցենզ. տալու ամսաթ.	Գործողության տեսակը	Գործուն. իրական. վայրը	Գործող. ժամ. կետը	Պետական տուրքի առաջին վճարման ամսաթիվը	Ծանոթ.
1	«ԱՐԴԻՎՈՆ» ՍՊԸ ԼՂՀ, Մարտակերտի շրջան, գ. Ջազիկ	90144672	ՇԻ-877	07.08.2014	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ բնակելի, հասարակական և արտադրական	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	31.07.2014	
2	«ԱՐԱՄԵ» ՍՊԸ Ասկերանի շրջան, գյուղ Գահիրավ	90073476	ՈՏՀ-878	14.08.2014	Որակի տեխնիկական հսկողություն, ըստ հետևյալ ոլորտի՝ էներգետիկ	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	14.08.2014	
3	«Արմեն-88» ՍՊԸ ք. Ասկերան, Կոմունյանցի 19	90073159	ՇԻ-879	14.08.2014	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ հիդրոտեխնիկական	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	14.08.2014	

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր
2014 թվականի օգոստոս ամսվա համար

ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն

NN	Լիցենզավորված, թույլտվություն, արտոնագիր ունեցող անձի		Լիցենզիայի սերիան և համարը	Լիցենզավորված գործունեության տեսակը	Լիցենզիայի վերաձևակերպում		Լիցենզիայի գործողության ժամկետի երկարացում (նշել երկարացված ժամանակահատվածի ավարտման ամսաթիվը)	Լիցենզիայի, թույլտվության արտոնագրի գործողության կասեցում		Լիցենզիայի գործունեության դադարեցման կամ թույլտվությունը, արտոնագրի կասեցումը հետո՞
	Անվանումը	ՀՎՀՀ			Որոշման ամսաթիվը	Նոր անվանումը		Կասեցման մասին որոշման կամ դեպքի ամսաթիվը	Կասեցումը համեմատ մասին որոշման ամսաթիվը	
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.
1	«ԷԼԿՈՍ» ՍՊԸ ք. Ստեփ. Բաղրամյանի 1/15	90013927	ՇԻ-056	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ էներգետիկ				08.08.2014		

2	«Ճարտարագիտա- շինարարական կենտրոն» ՓԲԸ ք. Ստեփ., Ա.Մանուկյան 8	90017574	ՔՓՄ- 061	Քաղաքաշինական փաստաթղ- թերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարա- կական և արտադրական</i>				08.08.2014		
3	«ՖՈՐՈՒՄ» ՍՊԸ ք. Ստեփ. Լուսավորիչ 3	90021442	ՔՓՄ- 311	Քաղաքաշինական փաստաթղ- թերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարա- կական և արտադրական</i>				17.08.2014		
4	«Սատուրն» ՍՊԸ ք. Հաղորթ Սկրտչյանի 21	90282459	ՔՓՄ- 477	Քաղաքաշինական փաստաթղ- թերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարա- կական և արտադրական</i>				30.08.2014		
5	«ԱՐՑԱԽՈՒՎ» ՓԲԸ ք.Ստեփանակերտ, Մելիքավան 23	90027001	ՇԻ- 616	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				06.08.2014		
6	«ՄԱԼԱԽԻՏ» ՓԲԸ ք.Ստեփ. Ա.Հեքիմյանի փողոց 9/1	90029633	ՔՓՄ- 668	Քաղաքաշինության փաստաթղ- թերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարա- կական և արտադրական</i>				09.08.2014		
7	«Վրեժ» ՓԲԸ Լ.Ղ.Հ Ասկերանի շրջան գ. Այգեստան	90070701	ՇԻ- 670	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>				20.08.2014		
8	«ԲԻՈՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՍՊԸ ք. Ստեփ. Մ. Բաղրամյանի նրբ. 18 տուն	90030133	ՔՓՄ- 828	Քաղաքաշինական փաստաթղ- թերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարա- կական և արտադրական</i>				08.08.2014		
9			ՔՓՄ- 829	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>						
10	«ԷՆԵՐԳՈՑԱՆՑՇԻՆ» ՍՊԸ ք. Ստեփ. փող. Նաբերեժնայա 5	90017025	ՇԻ- 830	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>				16.08.2014		
11	«ՀԻԳՐՈՇԻՆԱՐԱՐ» ՍՊԸ ք. Ստեփ., Ազատամարտիկների 16ա	90029796	ՔՓՄ- 831	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>				29.08.2014		
12	«Արգիշտի» ՍՊԸ Լ.Ղ.Հ Քաղաքաղի շրջան, գ. Մուս	10002815	ՇԻ- 832	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>				29.08.2014		
13	«ՇԱՀ» ՍՊԸ ք. Ստեփ. Մ. Գոշի թիվ 6ա	90030786	ՇԻ- 833	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				29.08.2014		
14	«ԱՐՑԱԽՃԱՆ» ինստիտուտ ՓԲԸ ք. Ստեփ. Հեքիմյանի 8 ^ա բն.23	90009361	ՔՓՄ- 291	Քաղաքաշինական փաստաթղ- թերի մշակում ըստ հետևյալ ոլորտի՝ <i>տրանսպորտային</i>				14.08.2014		
15	«ՄՈՂԵՈՆ» ՓԲԸ ք. Ստեփ., Ս. Գավիթ 54/52	90004522	ՈՏՀ- 741	Որակի տեխնիկական հսկո- ղություն, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				06.09.2014		

**ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԸԼԹԵՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«08» սեպտեմբերի 2014թ.

N 61Ն

ք. Ստեփանակերտ

**ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀԱՎԱՍՏՎՈՂ
ՀԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 64-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Սիրկապ-Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության գրությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. «Կարին» փակ բաժնետիրական ընկերությանը 2003 թվականի հոկտեմբերի 02-ին NCO-09, 2003 թվականի հոկտեմբերի 02-ին NCO-10 և 2008 թվականի դեկտեմբերի 18-ին NCO-71 տրամադրած հանքարդյունահանման թույլտվությունները վերաձևակերպել «Սիրկապ-Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության անունով:

2. Վարչության աշխատակազմի բնական ռեսուրսների կառավարման գործակալության պետին՝ ապահովել սույն հրամանի առաքումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ հրապարակման նպատակով:

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԸՆԹԵՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«10» սեպտեմբերի 2014թ.

N 63Ն

ք.Ստեփանակերտ

**«ԱՐՏԱՂՐԱԿԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ-3» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ՏՐՎԱԾ ԸՕ 62 ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքի 57-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «Արտաղրական կոմբինատ-3» փակ բաժնետիրական ընկերության գրությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ`

1. Ուժը կորցրած ճանաչել «Արտաղրական կոմբինատ-3» փակ բաժնետիրական ընկերությանը տրված ԸՕ-62 ընդերքօգտագործման իրավունքը:
2. Վարչության աշխատակազմի բնական ռեսուրսների կառավարման գործակալության պետին՝ ապահովել սույն հրամանի առաքումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ հրապարակման համար:

Կ. ԿԱՐԱՊԵՏԱՆ

